# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

## ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՑ

ԱՆՎՃԱՐ

*Գրքույկը ստեղծվել է հատուկ փորձագիտական խմբի կողմից՝ օժանդակելու Ձեր ֆինանսական կայունությանը: Գրքույկում ներկայացված են Ձեր գումարը կառավարելու օգտակար խորհուրդներ:*

***

Գրքույկը բացառապես տեղեկատվական բնույթի է: ՀՀ կենտրոնական բանկի ջանքերով մշակված գրքույկում ներառվել է ամբողջական, հավաստի և արդիական տեղեկատվություն:

Այնուամենայնիվ, ՀՀ կենտրոնական բանկը չի երաշխավորում և պատասխանատվություն չի կրում ներկայացված տեղեկատվության թյուրըմբռնման, դրա օգտագործման արդյունքում ուղղակի կամ անուղղակի կրած հետևանքների, ինչպես նաև պարունակվող տեղեկատվության հիման վրա Ձեր կայացրած ցանկացած որոշման կամ գործողության համար:

ՀՀ կենտրոնական բանկը պատասխանատվություն չի կրում նաև գրքույկում մատնանշված կամ Բանկի կողմից առաջարկվող ծառայություններից օգտվելու նպատակահարմարության համար:

Գրքույկում վետեղված տեղեկատվությունը ունի զուտ խորհրդատվական բնույթ, շահառուներին օժանդակելու նպատակ, բայց որևէ կերպ չի կարող ընկալվել որպես կատարման համար պարտադիր կամ դիտվել որպես հաճախորդին պարտավորեցնող կամ ուղղորդող:

Գրքույկում կան այլ կայքէջերին հղումներ, որոնց տեղեկատվության բնույթը, բովանդակությունը և հասանելիությունը ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության շրջանակից դուրս են:

# Ֆինանսական խորհուրդներ փորձագետներից

**Ինչպե՞ս օգուտ քաղել բանկային առաջարկներից**

Բանկային քարտ . . . . . 3
Ավանդ . . . . . 7
Հիփոթեք . . . . . 11

**Ինչի՞ն է պետք ուշադրություն դարձնել ծախսելիս**

Սպառողական վարկեր . . . . . 15
Տոկոս . . . . . 19
Երաշխավոր . . . . . 21
Վարկային պատմություն . . . . . 23
Ֆինանսական խարդախություններ . . . . . 25
Ֆինանսական համակարգի հաշտարար . . . . . 27

**Փողի կառավարման փորձված խորհուրդներ**

Խնայողության «ոսկե կանոն». . . . . 29
Ուսման ֆինանսավորում . . . . . 31
Խնայողության կանոն - 10/90 . . . . . 33
Վարկի կանոն - 30/70 . . . . . 35
Ավտովարկի կանոն - 20/4/10 . . . . . 37
Հիփոթեքի կանոն – 30/3 . . . . . 39

**Վերջաբան** . . . . . 41

**Օգտակար կապ** . . . . . 42

# Ինչպե՞ս օգուտ քաղել բանկային առաջարկներից

## Բանկային քարտ

*Հնարավորությունները*

- Հաշվի մնացորդի ստուգում
- Փողերի 24-ժամյա օգտագործման հնարավորություն
- Փոխանցումների ստացում
- Քարտը կորցնելու դեպքում փողի պահպանում
- Ձեր պահանջով ամեն ամիս կոմունալ վճարումների ավտոմատ ձևով կատարում բանկի կողմից
- Հաշվին մուտքերի ու ելքերի հիման վրա վարկի ստացում

Ինտերնետ բանկինգ (առցանց/ օնլայն) ծառայությունով կարող եք կոմունալ վճարումները կատարել Ձեզ հարմար տեղից և ժամի՝ համակարգչով կամ հեռախոսով:

*Ապահովություն*

***Մի՛ պահեք PIN կոդը ու քարտը նույն տեղում***

Քարտի գողության կամ կորստի դեպքում միանգամից կանգահարեք Ձեր բանկ և խնդրեք արգելափակել քարտը, հակառակ դեպքում Ձեր գումարը կարող է օգտագործվել:

***Մի՛ թույլ տվեք, որ վճարում կատարելիս քարտը Ձեր տեսադաշտից հեռու տանեն***

Գաղտնի պահեք քարտի երկու կողմերի տվյալները, որպեսզի այլ անձինք Ձեր փողերը օգտագործել չկարողանան:

***Մի՛ մուտքագրեք Ձեր քարտի տվյալները համակարգչում,*** *եթե կայքի հասցեն չի սկսվում https://-ով, կամ* 🔒*secure -ով.*



## Նշումներ

## Նշումներ

# Ավանդ

## *Հնարավորությունները*

- Տոկոսային եկամտի ստացում
- Գնաճի ազդեցության կրճատում ստացվող տոկոսների հաշվին
- Ավանդին գումար ավելացնելու և հանելու հնարավորություն
- Ավանդի հաշվին վարկ ստանալու հնարավորություն

*Խնայեք այն արժույթով, որով հաճախ եք ծախսեր անում: Եթե դրամով եք շատ ծախսում՝ խնայեք դրամով:*

*Ստացված տոկոսագումարը հարկվում է 10% եկամտահարկով:*

## *Տեսակներ*

| | *Ցպահանջ ավանդ* | *Ժամկետային ավանդ* |
|---|---|---|
| *Տարեկան տոկոս* | *Միջին* | *Բարձր* |
| *Ժամկետ* | *Ըստ Ձեր պահանջի* | *Ֆիքսված* |
| *Հաշվին մուտք և ելք* | ✓ | *x** |

* Ձեր փողը բանկից կարող եք վերցնել երբ ուզեք, բայց չեք ստանա տոկոսագումար, եթե խախտեք ժամկետը:

Ինչքան հաճախ է տոկոսագումար ավելանում Ձեր ավանդին (*կապիտալացվում*), այնքան ավելի ձեռնտու է Ձեզ:

*Օրինակ*

Ենթադրենք՝ ամսական ստանում եք **200 000** ՀՀ դրամ, որից **100 000** ՀՀ դրամը կարողանում եք խնայել: Որքա՞ն գումար կունենաք մեկ տարի անց՝ փողը տարբեր ձևերով խնայելու դեպքում.

| | *Փողը պահել տանը* | *Փողը պահել քարտին* (Ցպահանջ ավանդ) | *Փողը ավանդ դնել* (Ժամկետային ավանդ) |
|---|---|---|---|
| *Տարեկան տոկոսադրույք* | x | *6%* | *11%* |
| *Գումար* | *1,200,000* | *1,233,556* | *1,262,387* |
| *Փողի ավելացում և կանխիկացում* | ✓ | ✓ | *Պայմանագրային* |

*Ապահովություն*

Բանկերի հանդեպ վստահությունը ապահովելու համար Կենտրոնական բանկը հիմնադրել է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ: Ձեր ավանդները երաշխավորված են՝

- ✓ Դրամով ավանդ՝ մինչև **10 մլն** ՀՀ դրամ
- ✓ Արտարժույթով ավանդ՝ մինչև **5 մլն** ՀՀ դրամ:

Եթե ունեք 10 մլն ՀՀ դրամից ավելի խնայողություն, կարող եք ներդնել տարբեր բանկերում՝ ապահովագրելով ողջ գումարը:

*Բանկը իրավունք չունի առանց Ձեր համաձայնության կամ դատարանի որոշման Ձեր կամ Ձեր ունեցած փողերի մասին որևէ տեղեկատվություն տրամադրել ոչ հարկային մարմիններին, ոչ էլ անգամ Ձեր բարեկամներին:*

## Նշումներ

## Հիփոթեք

*Հնարավորություններ և տեսակներ*

Հիփոթեքային վարկը տրվում է անշարժ գույք (տուն, հողամաս) գնելու, վերանորոգելու կամ կառուցելու համար: Կախված Ձեր նպատակից և կարգավիճակից՝ կան հետևյալ հնարավորությունները.

- **Երիտասարդ ընտանիքների համար ծրագրեր**
  Մինչև 35 տարեկան երիտասարդ ամուսինների և միայնակ ծնողների համար:
- **Նորակառույց բնակարաններ գնելու ծրագրեր**
  Նորակառույց բնակարան գնելիս Ձեր աշխատավարձի եկամտային հարկի հաշվին մասամբ կմարվի հիփոթեքային վարկը:
- **Ակգային հիփոթեքային ընկերության նախագծեր**
  Նախատեսված է միջին եկամուտ ունեցող ՀՀ քաղաքացիների համար:
- **Շրջակա միջավայրի պահպանում**
  Էներգիա խնայելու համար լուսավորության, ջերմամատակարարման բարելավման, բնակարանի ջերմամեկուսացման և նման այլ նպատակներին ուղղված վարկեր:
- **Կառույցի առաջարկներ**
  Անկախ ծրագրային վարկերից՝ բանկերն ունենում են իրենց վարկային առաջարկները:

*Ավելի ձեռնտու է մինչև վարկ վերցնելը կուտակել տան արժեքի մեծ մասը:*

*Օրինակ*

Ենթադրենք՝ ցանկանում եք գնել բնակարան, որն արժե **15 մլն** ՀՀ դրամ: Դուք ունեք **4.5 մլն** ՀՀ դրամ: Ձեր ընտանիքի ընդհանուր եկամուտը հաշվի առնելով՝ կարող եք ամեն ամիս վարկից մարել **120,000** ՀՀ դրամ: Սակայն այդ 120,000 ՀՀ դրամը խնայելով բանկում՝ **2 տարի** անց կունենաք տան արժեքի 50%-ը, ինչը կօգնի Ձեզ ի վերջո խնայել 13 մլն ՀՀ դրամ և 9 տարի.

| | X | ✓ |
|---|---|---|
| *Կանխավճար* | *30%* | *50%* |
| *Խնայողություն* | *4,500,000* | *7,500,000* |
| *Վարկի գումար* | *10,500,000* | *7,500,000* |
| *Վարկի տոկոս* | *18,130,742* | *5,028,716* |
| *Վարկը մարելու տարիներ* | *20* | *9* |

*Ապահովություն*

Քանի որ հիփոթեքային վարկը երկարատև է, շատ կարևոր է տրամադրվող վարկի արժույթը: Վարկը մարելու տարիների ընթացքում փոխարժեքի (կուրսի) փոփոխման հետևանքով Դուք կարող եք կրել մեծ կորուստներ:

*Փորձագետները խորհուրդ են տալիս վարկը վերցնել այն արժույթով, որով ստանում եք Ձեր հիմնական եկամուտը:*

*Վարկ՝ 13%*

## Օրինակ

Հարևաններ Ստեփանին ու Գուրգենին անհրաժեշտ էր գումար: Նրանք վարկ վերցրին տարեկան **18%**-ով: Վերցնելու պահին դոլարի փոխարժեքը (կուրսը) **500** ՀՀ դրամ էր: Երկուսն էլ նույն չափով վարկ էին ստացել՝ Ստեփանը՝ **500,000** դրամ, իսկ Գուրգենը՝ **1000** դոլար:

Մարման հենց առաջին ամսից դոլարի փոխարժեքը (կուրսը) բարձրացավ՝ դառնալով **550** ՀՀ դրամ: Մեկ տարի անց համեմատելով՝ նրանք պարզեցին, որ Գուրգենը **59,000** դրամ ավելի է վճարել, քան Ստեփանը:

| | *Վարկ* | *Տոկոս (18%)* | *Ընդհանուր տարեկան վճար (1 ԱՄՆ դոլար = 550 ՀՀ դրամ)* |
|---|---|---|---|
| *Ստեփան* | *500,000 դրամ* | *90,000 դրամ* | *590,000 դրամ* |
| *Գուրգեն* | *1,000 դոլար* | *180 դոլար* | *649,000 դրամ* |
| | *Կորուստ* | | ***59,000 դրամ*** |

Դժվար է կանխատեսել փոխարժեքի (կուրսի) փոփոխությունը, ուստի կորուստներից խուսափելու համար վարկը վերցրեք Ձեր եկամտի արժույթով:

## Նշումներ

# Ինչի՞ն է պետք ուշադրություն դարձնել ծախսելիս

## Սպառողական վարկեր

*Հնարավորությունները*

- Առևտրի իրականացում
- Մտածելու ժամանակի ընթացքում վարկից հրաժարվելու հնարավորություն՝ առանց լրացուցիչ ծախսերի
- Մինչև **10 մլն** ՀՀ դրամ վարկի ժամկետից շուտ մարում՝ առանց տույժ/տուգանքների

*Սպառողական վարկերը տրամադրվում են միայն ՀՀ դրամով:*

*Տեսակներ*

Սպառողական վարկի անվանումից կարելի է կռահել՝ ինչ նպատակի պետք է այն ծառայի.

- ✓ **Ապառիկ՝** կենցաղային գնումներ,
- ✓ **Ավտովարկ՝** մեքենայի ձեռքբերում,
- ✓ **Ուսումնական վարկ՝** ուսման վճար,
- ✓ **Ոսկու գրավով վարկ՝** տարբեր ծախսեր,
- ✓ **Օվերդրաֆտ՝** տարբեր ծախսեր:

Օվերդրաֆտը* հնարավորություն է տալիս ծախսելու ավելի գումար, քան իրականում կա Ձեր քարտին: Օվերդրաֆտ ստանալու երաշխիքներ կարող են լինել՝

- Աշխատավարձը,
- Լավ վարկային պատմությունը,
- Քարտին եղած գումարը,
- Ձեր հաշվի մուտքերն ու ելքերը,
- Ավանդը:

*Օրինակ**

Ենթադրենք՝ ցանկանում եք գնել լվացքի մեքենա, որն արժե 281,900 ՀՀ դրամ: Այդքան մեծ գումարով խանութ գնալու փոխարեն քարտին մուտքագրում եք 282,000 ՀՀ դրամ և վերցնում Ձեվ հետ: Դրամարկղում վճարելիս Ձեվ շահավետ առաջարկ են անում. լրացուցիչ 200 ՀՀ դրամով գնել 1 կգ լվացքի փոշի: Դուք համաձայնում եք՝ հիշելով, որ քարտին կա 282,000 ՀՀ դրամ: Պակասում է ընդամենը 100 ՀՀ դրամ: Եթե օգտվում եք օվերդրաֆտից, Ձեր քարտին ունենալով **282,000** ՀՀ դրամ, կարող եք վճարել **282,100** ՀՀ դրամ՝ բանկի կողմից 100 ՀՀ դրամ հավելյալ վարկավորման միջոցով:

*Ապահովություն*

Պայմանագիր կնքելիս հաշվի առեք հետևյալ կետերը՝

| | |
|---|---|
| ○ Փաստացի տոկոսադրույք | Համեմատեք տարբեր վարկեր, վերցրեք ամենացածր տոկոսովը: |
| ○ Վարկի արժույթ | Ընտրեք ՀՀ դրամը, եթե Ձեր հիմնական ստացած եկամուտը դրամով է: |
| ○ Մարման գրաֆիկ | Ձեռնտու է մայր գումարի հավասարաչափ նվազեցումով մարումը: |
| ○ Վարկի տրամադրման ձև | Վերցրեք կանխիկ՝ կանխիկացման տոկոսագումարներից խուսափելու համար: |
| ○ Տույժ/ տուգանքներ | Հարցրեք և՛ ուշացնելու, և՛ ժամկետից շուտ մարելու տույժերի մասին: |

✓ **Մի՛ ստորագրեք փաստաթղթեր՝ առանց կարդալու**

- Կարդացեք կամ խնդրեք աշխատողին բացատրել փաստաթղթերի բովանդակությունը, որոնք պետք է ստորագրեք:
- Ստուգեք, որ Ձեվ ներկայացված պայմանները համապատասխանեն պայմանագրում նշվածներին:
- Պահեք պայմանագրի Ձեր օրինակը:

✓ **Մի՛ տարվեք վարկ ստանալու հեշտ պայմաններով**

Ինչքան հեշտ են վարկ ստանալու պայմանները, այնքան ավելի թանկ է լինելու վարկը: Բանկը վարկ տրամադրելիս այն հետ չստանալու ռիսկ է կրում: Որքան ավելի շատ տվյալներ է բանկը Ձեվնից ստանում, այնքան ավելի վստահ է լինում, որ Դուք կկարողանաք փակել պարտքը ու ավելի քիչ վճարներով է տրամադրում վարկը:

*Ինչքան ավելի քիչ փաստաթղթեր են Ձեվնից պահանջում վարկ տալու համար, այնքան ավելի թանկ է լինելու վարկը:*

✓ **Մի՛ գցեք վարկի մարման կտրոնները**

Կտրոնները կարևոր են վարկի մարման ապացույցներ ունենալու համար:

✓ **Մի՛ վերցրեք Ձեվ պետք եղած գումարից ավելի**

Վարկը տոկոսով պարտք է, որի չափից շատ լինելու դեպքում կխրվեք պարտքերի մեջ:

## Նշումներ

# Տոկոս

Վարկ վերցնելիս հաճախ մեր հաշվարկները չեն համընկնում բանկի ներկայացրած թվերին: Փորձենք հասկանալ պատճառները:

### *Անվանական տոկոս*

Անվանական տոկոսը Ձեզ տրամադրվող գումարի գինն է: Գրքույկներում և գովազդային պաստառներում բանկերը նշում են անվանական տոկոսը:

### *Փաստացի տոկոս*

Վարկը Ձեզ տալու համար բանկը որոշ ծախսեր է կատարում վարկային դիմումը ուսումնասիրելու, գրավը գնահատելու և այլ ծառայությունների համար: Այդ պատճառով վարկի **անվանական** տոկոսին ավելանում են **լրացուցիչ ծախսեր,** որից հետո նոր ստացվում է **փաստացի** տոկոսը՝ վարկի իրական արժեքը:

Անվանական տոկոս + Լրացուցիչ վճարներ = Փաստացի տոկոս

*Օրինակ*

Ենթադրենք՝ Ձեզ պետք է **1,5 մլն** ՀՀ դրամի վարկ՝ **մեկ տարով:** Բանկն առաջարկում է տրամադրել վարկը **22%**-ով: Փաստացի տոկոսը պարզելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր ծախսերը.

Անվանական տոկոս՝ **22 %**

↓

Վարկի դիմումին ընթացք տալու վճար՝ **10,000**

↓

Վարկի դիմումի սպասարկման վճար՝ **15,000**

↓

Գրավի գնահատման ծառայության վճար՝ **15,000**

↓

Փաստացի տոկոս՝ **30,97 %**

## Երաշխավոր

Բոլորիս ծանոթ իրավիճակ է, երբ մտերիմ ընկերը կամ բարեկամը խնդրում է դառնալ իր երաշխավորը՝ վարկ վերցնելու համար: Իսկ գիտե՞ք՝ ինչ է նշանակում երաշխավոր լինել.

- **Ձեր ծանոթի վարկի մարումը կարող է ընկնել Ձեր ուսերին**
  Եթե Ձեր ծանոթը չկարողանա մարել վարկը, ապա պարտքը վերադարձնելու եք Դուք: Գումար չունենալու դեպքում կկորցնեք Ձեր գույքը:

- **Դուք կարող եք վրկվել ինքներդ Ձեզ համար վարկ վերցնելու հնարավորությունից**
  Երաշխավորը նույնպես վարկառու է: Նշանակում է՝ Դուք արդեն ունեք վերցված վարկ, ուստի նոր վարկ վերցնելու դեպքում, հնարավոր է, Ձեզ անհրաժեշտ գումարից ավելի քիչ տան կամ մերժեն Ձեր դիմումը:

- **Ձեր վարկային պատմությունը կարող է «փչանալ»**
  Եթե Ձեր ծանոթը ուշացնի վարկի մարումը, բանկը Ձեր ծանոթի և Ձեր մասին տեղեկություն կուղարկի վարկային բյուրո, ինչի պատճառով կխաթարվի Ձեր վարկային պատմությունը:

*Մի՛ վերցրեք Ձեր անունով վարկ ուրիշի համար:*

## Նշումներ

## Վարկային պատմություն

ԱՔՌԱ վարկային բյուրոն գնահատում է, թե որքան վստահելի եք Դուք վարկը մարելու հարցում: Ձեր կողմից կատարվող կոմունալ վճարների, վարկի մարումների և երաշխավոր լինելու պատմությունները ուղարկվում են վարկային բյուրո:

Բանկը, ստանալով Ձեր թույլտվությունը, հարցում է կատարում վարկային բյուրոյին վճարումներ անելու Ձեր պատմության մասին: Դրանից ելնելով՝ փորձում է հասկանալ՝ որքան պարտաճանաչ ու վստահելի եք Դուք:

Ի դեպ, ինքներդ էլ կարող եք ստուգել Ձեր վարկային պատմությունը. անվճար՝ տարին մեկ անգամ, իսկ ավելիի դեպքում՝ վճարումով:



*Դրական վարկային պատմությունը օգնում է ավելի հեշտ ու լավ պայմաններով ստանալ վարկը:*

*Բանկը կարող է տեսնել միայն վերջին **5** տարիների Ձեր վարկային պատմությունը:*

## Նշումներ

## Ֆինանսական խարդախություններ

*Եղեք կգոն, եթե.*

- Կոկիկ հագնված, բարետես մի մարդ ժպտալով Ձեզ շատ եկամտաբեր առաջարկ է անում:
- Նամակ եք ստացել արտերկրից (ասենք՝ Նիգերիայից), որտեղ նշված է, որ Դուք մինչ օրս Ձեզ անհայտ տատիկի միակ ժառանգն եք և պետք է ուղարկեք Ձեր բանկային և անձնագրային տվյալները՝ կտակը ստանալու համար:

*Ինչ անել նման դեպքում.*

- Գաղտնի պահեք Ձեր անձնական տվյալները,
- Ձեռնտու առաջարկ անող անձից պահանջեք լիցենզիա,
- Զանգահարեք ՀՀ կենտրոնական բանկ՝

**010 592 697**

ստուգելու լիցենզիայի հավաստիությունը:

Լիցենզիա չունեցողների հետ գործարքներ մի կատարեք:

## Նշումներ

## Ֆինանսական համակարգի հաշտարար

*Ինչ անել, եթե առաջացել է ինչ-որ խնդիր ֆինանսական կառույցի հետ.*

1. **Գրավոր դիմում գրեք տվյալ կառույցին**
   Կառույցը պարտավոր է Ձեր բողոքին պատասխանել **10 օրում:** Եթե չի պատասխանում կամ համաձայն չեք պատասխանի հետ, կանգեք Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ **060 70 11 11:**

2. **Դիմեք Ֆինանսական համակարգի հաշտարարին (ՖՀՀ)**
   ՖՀՀ-ը **14 օրից** կտեղեկացնի՝ ինչ լուծում կարելի է ակնկալել՝ ***ԱՆՎՃԱՐ:***

3. **Դիմեք դատարան**
   Եթե համաձայն չեք ՖՀՀ որոշման հետ, կարող եք դիմել դատարան:



***Դատարան*** *ներկայացված գործերը չեն կարող դիտարկվել* ***ՖՀՀ*** *կողմից, իսկ* ***ՖՀՀ****-ից* ***դատարան*** *՝ կարող են:*

## Նշումներ

# Փողի կառավարման փորձված խորհուրդներ

## Խնայողության «ոսկե կանոն»

Ձեռնտու խնայողությունը պետք է.

| | | |
|---|---|---|
| ○ | Ձեվ փող բերի (եկամտաբեր) | Քարտը և ավանդը տոկոսագումար են բերում |
| ○ | Լինի Ձեր ձեռքի տակ (հասանելի) | Երբ ցանկանաք, քարտին կարող եք փող ավելացնել կամ հանել, ավանդի դեպքում՝ նույնպես, բայց կարող եք կորցնել տոկոսագումարները |
| ○ | Լինի առանց ռիսկի (ապահով) | Բանկում ունեցած Ձեր փողը երաշխավորված է. Դրամով՝ մինչև **10 մլն** ՀՀ դրամ, Արտարժույթով՝ մինչև **5 մլն** ՀՀ դրամ |

## Նշումներ

## Ուսման ֆինանսավորում

Ո՞րն է ավելի ձեռնտու՝ ուսման վարկը, թե՞ մանկական ավանդը: Ենթադրենք՝ բուհի **4 տարվա** ուսման վճարը **1,5 մլն** ՀՀ դրամ է: Ուսման վարկի անվանական տոկոսադրույքը **10%** է, մանկական ավանդինը՝ նույնպես **10%**:

| | *Մանկական ավանդ* | *Ուսման վարկ* |
|---|---|---|
| *Սկզբնական գումար* | *50,000* | *0* |
| *Ամսական վճար* | *10,000* | *22,760* |
| *Տոկոս* | *562,720 (կուտակված)* | *685,080 (վճարված)* |
| *Ընդհանուր գումար* | *1,572,720* | *2,185,080* |
| *Պայմանագրի ժամկետ* | *8* | *8* |

Մանկական ավանդով ուսման ֆինանսավորումն ավելի ձեռնտու է՝

- ✓ Ժամկետ՝ **8** տարի,
- ✓ Ամսական ավելի ցածր վճար՝ ավանդի ավելացում՝ **10,000** ՀՀ դրամ, վարկի մարում՝ **22,760** ՀՀ դրամ,
- ✓ Ընդհանուր գումար՝ ավանդով՝ **1,572,720** ՀՀ դրամ, վարկով՝ **2,185,080** ՀՀ դրամ:

## Նշումներ

## Խնայողության կանոն – 10/90

Ըստ փորձագետների՝ գումար կուտակելու համար ստացված եկամտից նախ պետք է խնայել վաստակածի **10%**-ը, այնուհետև սկսել ծախսել:

Սխալ

*Եկամուտ* – *Ծախսեր* = *Խնայողություն*

Ճիշտ

*Եկամուտ* – *Խնայողություն* = *Ծախսեր*

**100 %** **10 %** **90 %**

## Նշումներ

## Վարկի կանոն – 30/70

Ըստ փորձագետների՝ վարկի ամսական մարումները չպետք է գերազանցեն Ձեր ամսական եկամտի 30 - 50% -ը: Հակառակ դեպքում խորհուրդ չի տրվում ընկնել վարկի բեռի տակ:

Ընդհանուր եկամուտ




Ապրելու փող

Վարկի մարում

*Օրինակ**

Եթե Ձեր ամսական եկամուտը 200,000 ՀՀ դրամ է, վարկ կարելի է վերցնել, եթե ամսական մարումները 60,000 - 100,000 ՀՀ դրամի միջակայքում են:

## Նշումներ

## Ավտովարկի կանոն – 20/4/10

Փորձագետները խորհուրդ են տալիս մեքենան վարկով գնել, եթե.

| | Ամսական 200,000 ՀՀ դրամ եկամտի դեպքում |
|---|---|
| Ունեք **20%** կանխավճար | ✓ Ունեք 300,000 ՀՀ դրամ՝ որպես կանխավճար |
| Վարկի ամսական մարումը Ձեր ամսական եկամտի **10%**-ն է | ✓ Վարկի ամսական վճարը 20,000 ՀՀ դրամ է |
| Ավտովարկը կարող եք մարել 4 տարում | ✓ Մեքենան արժե 1,020,000 ՀՀ դրամ |

## Նշումներ

## Հիփոթեքի կանոն – 30/3

Փորձագետները խորհուրդ են տալիս վարկով տուն գնել, եթե.

| | Ամսական 200,000 ՀՀ դրամ եկամտի դեպքում |
|---|---|
| Հիփոթեքի ամսական մարումը Ձեր ամսական եկամտի **30%**-ն է | ✓ Վարկի ամսական վճարը **60,000** ՀՀ դրամ է |
| Տան գինը ավելի քիչ է, քան Ձեր տարեկան եկամտի եռապատիկը | ✓ Տունը արժե **7,200,000** ՀՀ դրամ |

*Տան գին* < *3 x Տարեկան եկամուտ*

*Կանխավճար՝ 10%*

## Նշումներ

## Վերջաբան

Ներկայացված կանոնները պարտադիր օրենքներ չեն: Դրանք նպատակ ունեն օգնելու Ձեզ ֆինանսական որոշումներ կայացնելիս: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այս խորհուրդներին հետևող մարդիկ չեն ունեցել ֆինանսական լուրջ խնդիրներ:

- ✓ Հավելյալ տեղեկատվության,
- ✓ Խորհուրդների,
- ✓ Հաշվիչների՝ ավանդային և վարկային,

Ամենաձեռնտու ֆինանսական ծառայությունը գտնելու և այլ գործիքներից օգտվելու համար կարող եք այցելել www.abcfinans.am կայք:

## Օգտակար կապ

| Կառույց | Հեռախոս | Կայք |
|---|---|---|
| ՀՀ կենտրոնական բանկ | 010 592 697 | www.cba.am |
| Առավել շահավետ ֆինանսական ծառայությունը գտնելու օգնական | – | www.fininfo.am |
| Ֆինանսներ բոլորի համար | 010 592 697 | www.abcfinance.am |
| Ֆինանսական կառույցների հետ խնդիրների լուծման օգնական | 060 70 11 11 | www.fsm.am |
| Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ | 010 592 664 | www.adgf.am |
| Փոխարժեքների համեմատման և ընտրության օգնական | – | www.rate.am |
| Վարկային պատմության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում | 010 522 419 | www.acra.am |
| Կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում | 114 | www.psac.am |
| Ավտոտրանսպորտային պատահարում տուժածների շահերի պաշտպանություն | 010 58 00 32 | www.paap.am |
| Պետական պարտատոմս ձեռք բերելու համար | 060 700 235 | www.mfe.am |
| ԽՍՀՄ ավանդների հետ կապված դիմել ՀՀ սոցապ նախարարություն | 010 520 830 | www.mlsa.am |

## Նշումներ

## Նշումներ

fininfo
ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒՆ

7 չափիր, 1 կտրիր:

Վարկերը,
վճարային քարտերը, դրամական
փոխանցումները և ավանդները
համեմատելու համար այցելեք

www.fininfo.am

abcfinance.am
ԱՅԲ ԲԵՆ ԳԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐ